ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 344 - Կ

«03» 11 2023թ. ք. Երևան

«ՀԻԴՐՈ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ և «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի մարտի 10-ի N 16-Լ հրամանով հաստատված Ջրային կոմիտեի կանոնադրության 22-րդ կետի 10-րդ ենթակետով և ստորև ներկայացված հիմքերով.

ՀԻՄՔԵՐ

Ջրային կոմիտեի կարիքների համար կազմակերպված հոսքաչափերի ձեռքբերման ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով ընթացակարգի 1-7 չափաբաժինների համար մասնակցության հայտ են ներկայացրել «ՀԻԴՐՈ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ և «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊ ընկերությունները: Ներկայացված հայտերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ մասնակից «ՀԻԴՐՈ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային ստորագրությամբ (էլեկտրոնային ստորագրությունները տեսանելի չեն) և առաջարկվող ապրանքների օրիգինալ լեզվով տեխնիկական անձնագրերը չեն համապատասխանում հայերեն լեզվով ներկայացված տեխնիկական անձնագրերին: Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ և ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով հրավերի 8.9 կետերի՝ գնահատող հանձնաժողովը 04.09.2023թ. թիվ 6 որոշմամբ մեկ աշխատանքային օրով կասեցրել է հանձնաժողովի նիստը՝ առաջարկելով «ՀԻԴՐՈ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սակայն մասնակից «ՀԻԴՐՈ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ տեղեկացրել է, որ էլեկտրոնային ստորագրությունը վավեր է, սակայն տեսանելիության բացակայությունը միգուցե կապած է ծրագրային ապահովման հետ, և առաջարկվող հոսքաչափերի օրիգինալ լեզվով տեխնիկական անձնագրերի թարգմանությունը իրականացվել է թարգմանչական ծառայություններ իրականացնող

կազմակերպության կողմից և տեխնիկապես հնարավոր չէ մեկօրյա ժամանակահատվածում այդ աշխատանքը հանձնարարել այլ կազմակերպության:

Հիմք ընդունելով Կարգի 42-րդ և ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.10 կետը գնահատող հանձնաժողովը 07.09.2023թ. թիվ 7 որոշմամբ մերժել է մասնակից «ՀԻԴՐՈ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊԸ-ի կողմից 1-7 չափաբաժինների համար ներկայացված հայտը:

ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով ընթացակարգի մասնակից «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի 07.09.2023թ. թիվ 7 որոշմամբ ճանաչվել է ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ 6-րդ և 7-րդ չափաբաժինների ընտրված մասնակից: 08.09.2023թ. հրապարակվել է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ընթացակարգի 1-7 չափաբաժինների համար սահմանվել է անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը (09.09.2023թ. մինչև 18.09.2023թ. ներառյալ):

25.09.2023թ.-ին ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ 6-րդ և 7-րդ չափաբաժինների ընտրված մասնակից «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրել է էլեկտրոնային եղանակով՝ ընկերության էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, ինչպես նաև ARMEPS համակարգի միջոցով «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով ընթացակարգի հրավերի 9.5 և 10.1 կետերով սահմանված ժամկետում «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն չի ներկայացրել պայմանագրի ստորագրված տարբերակը, որակավորման և պայմանագրի ապահովումները: 06.10.2023թ. գրությամբ Ընկերությունը ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է դիմում՝ մրցույթը չեղյալ հայտարարելու վերաբերյալ՝ պատճառաբանելով. «Պայմանագրի և մրցույթի փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ պահանջված տրամագծի խողովակների և դրանց վրա պահանջված հոսքաչափերի մատակարարման կամ գնման պայմանագրերի ստորագրումը հակասում է ՀՀ-ում գործող նորմատիվ իրավական ակտերին, այդ թվում ՀՀ կառավարության և նախարարի որոշումներին:»: Հանձնաժողովի քննարկման արդյունքներով «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի դիմումը մերժվել է՝ դրանում բերված փաստերի անհիմն լինելու պատճառով:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը, Կարգի 32-րդ կետի 19) ենթակետը և ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով ընթացակարգի հրավերի 9.5, 10.1 և 8.20 կետերը՝ հանձնաժողովը 11.10.2023թ.-ի թիվ 8 որոշմամբ «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ին համարել է պայմանագիր կնքելու իրավունքից զրկված և ընթացակարգի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ 6-րդ և 7-րդ չափաբաժինների ընտրված մասնակիցներ ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՋԿ-ՀԲՄԱՊՁԲ-23/1 ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «ՀԻԴՐՈ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ և «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊ ընկերություններին՝ որոշել ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

2. «ՀԻԴՐՈ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ և «ՇԻՆ ՄՈՆՏԱԺ ՏՐԱՆՍ» ՍՊ ընկերությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով,

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

03.11.2023

X

ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Signed by: GHAZARYAN ARTAK 1403750092

Ա.ՂԱԶԱՐՅԱՆ